



ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM
 بطريركية الأرمن القسطنطينية
 PATRIARCAT ARMÉNIEN DE JÉRUSALEM

12 Մայիս, 2000

Գերաշնորհ
 Տ. Խաժակ Արք. Պարսամբան
 Առաջնորդ Հայաստանեայց Եկեղեցւոյ
 Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմի
 Նիւ Եօք.

Սիրելի Սրբազան,

Խորունկ վիշտով իմացանք անակնկալ մահը Միաբանութեանս
 երիտասարդ անդամներէն Հոգեշնորհ Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Մեղանեանի:

Իր պատանութեան տարիներէն սկսեալ մօտէն հետեւեցանք անոր
 առումին եւ նուիրեալ գործընթացին: Հայ Եկեղեցւոյ երիտասարդաց
 հաւաքութեան եւ ամառնային դասընթացներուն մտերմիկ շրջանակին
 մէջ ուշադրութիւն գրաւող եւ իր աշխուժութեամբը եւ իմացական
 հետաքրքրութեամբը ընկերական եւ վառվառն մկատուող Պարոյրն էր ան:

Եւ զարմանալի չէր որ, Տիբրոյիթի Ս. Յովհաննէս Եկեղեցւոյ մեր
 համայնքի եկեղեցական, կրթական, երիտասարդական, ընկերային,
 մշակութային, հոգեւոր եւ ազգային գործունէութեանց մէջ աշխուժօրէն
 մասնակցող եւ շաղախուող եւանդուն Պարոյրը, առանց վարանումի
 ընդառաջեց Քրիստոսի կոչին, յանձն առնելով դառնալ հոգեւոր սպասաւորը
 Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

Մարդկային հաշիւով 24 կարճ եւ սահմանափակ տարիներու
 ընթացքին, անիկա հաւատարիմ մնաց իր կոչումին, Քրիստոսի
 որթատունկին վրայ հաստատուած առողջ ու պտղաւից որթատունկի ճիւղի
 մը նման:

Եւ Երուսաղէմի Քրիստոսակոխ սրբավայրերուն եւ պաշտամունք-
 ներուն հայկական հոգեւոր ժառանգութեամբը խանդավառ, ան ընդունեց
 Քրիստոսի լուծը Քահանայական օծումով, իրքեւ Միաբան Սրբոց
 Յակոբեանց Ուխտին: Եւ ուր որ կանչուեցաւ ծառայելու, անիկա իր
 խնամքին եւ հոգատարութեան յանձնուած հոգիներուն, մեծին ու փոքրին,
 եղաւ դաստիարակ-ուսուցիչ, Հոգեւոր Հովիւ, կազմակերպող եւ փաշարող,
 գրող եւ փառգիր, ուրախակից եւ մխիթարիչ:



ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM
 بطريركية الأرمن القسطنطينية في القدس
 PATRIARCAT ARMÉNIEN DE JÉRUSALEM

Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը եւ հաւատացեալ ժողովուրդը, Մայիս 13 Շաբաթ առաւօտուն, Սուրբ Գլխադրի խորանին վրայ մատուցուած Ս. Պատարագով եւ Հոգեհանգստեան Պաշտօն կատարելով, պիտի աղօթենք որ Տէրը ընդունի հոգին "բարի եւ հաւատարիմ" իր ծառային, եւ անոր կեանքին ու գործունէութեան միտքաւոր յիշատակներով թեթեւցնէ ցաւը Միաբանութեանս անդամներուն, եւ սիրեցեալ Հայկազուն Մայրագոյն Վարդապետի վշտակիր ծնողին, հոյրներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի. Ամէն:»

Սիրոյ Ողջունիւ

Թորգոյ Արք. Մանուկեան

Թորգոյ Արք. Մանուկեան
 Հայ Պատրիարք Երուսաղեմի



ՀԱՅԿԱԶՈՒՆ Ծ. ՎՐԴ. ՄԵԼԳՈՆԵԱՆ
1949-2000